

Գիտահետազոտական աշխատանքի իրականացման
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Գյումրի

26.11.2018

«Հայկական Կարիտաս ԲՀԿ»-ն, ք. Գյումրի, Հ. Սարգսյան փ., անցում 3, տուն 8, ի դեմս գործադիր տնօրեն Գագիկ Տարասյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից և «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը, ք. Երևան, Տիգրան Մեծի 17, ի դեմս ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն պայմանագրի առարկան է հանդիսանում Պատվիրատուի պատվերով «Դպրոցներում և մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում ներառական կրթության որակի գնահատման, առկա խնդիրների վերհանման հետազոտություն» թեմայով գիտահետազոտական աշխատանքի իրականացումը ՀՀ Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերում:

Նշված աշխատանքի իրականացման գործողությունների ծրագիրը, պլանը և բյուջեն ներկայացված են Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագիրը ստորագրելուց հետո միջոցառումների շրջանակներում իրականացնել.

- քանակական և որակական տվյալների հավաքագրման նպատակով հետազոտական մեթոդաբանության ընտրություն և հարցաշարերի կազմում,
- մարզային այցելություններ, հանդիպումներ թիրախային խմբերի հետ և գիտահետազոտական աշխատանքների իրականացում,
- վերջնական հաշվետվության կազմում անգլերեն և հայերեն լեզվով, կատարված հետազոտության արդյունքների ամփոփում և ներկայացում:

2.2. Կատարողը պարտավորվում է աշխատանքներն իրականացնել աշխատանքային խմբով, պահպանել տեղեկատվության գաղտնիությունը և չօգտագործել այն որևէ այլ նպատակով:

2.3. Պատվիրատուն կարող է աշխատանքի կատարման ընթացքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ պահանջ ներկայացնել Կատարողին, իսկ Կատարողը պարտավորվում է ողջամիտ ժամկետում ամփոփել և ներկայացնել թերությունները:

2.4. Կատարողի կողմից աշխատանքի կատարման ընթացքում, Պատվիրատուի կողմից հայտնաբերված թերությունների չվերացումից կամ սույն պայմանագրի 2.1 կետի պահանջների խախտումը հիմք է Պատվիրատուի կողմից սույն պայմանագիրը միակողմանի լուծելու համար:

